ԼԱՑՈՒՄ Է ՔԱՄԻՆ...

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Լացում է քամին, կոծում է քամին,
Ողբում է անթիւ տանջանքը մարդու.
Դիզել են ամպերն էն սարի ծէրին,
Ճնշում են ծանրը, մռայլ ահարկու։

Օ՛, որքան մեծ է մեր ցաւն ու վիշտը,
Որքան կեանքն անցուկ, որքան դառն-ունայն,
Որքան խափուսիկ հոգու ժպիտը—
Անցաւ մի վայրկեան, արտասում է այն.

Եւ մեր մտքերը լուսաւոր, փայլուն
Պահուած են ահա մահու պատանքով,
Պայծառ յոյսերը արդէն քայքայուն,
Ու սիրտը լցուած սև տառապանքով...

Հեծում է քամին, ծեծում է քամին,
Ողբում անցաւոր խեղճ կեանքը մարդու.
Դիզել են ամպերն էն սարի ծերին,
Ճնշում են ծանր, մռայլ, ահարկու։

1900 թ. յունուարի 18. Խասաւ-Իւրտ։